

Ս. Ժողովը չէր գոհանար սակայն հայ վարդապետներու բերանացի եւ գրաւոր խոստումներով, որոնք կը հասնէին ստէպ Հոոմ ի մասին միութեան. կ'ուզէր տեսնել միութիւնը Փլորենտեան Ժողովի Համաձայնութեան կամ Եւզինիոս Դ.ի Հրահանգներու հիման վրայ:

Կարմեղեանց հետ մշակուած մտերիմ յարաբերութիւնը թելադրած է Մովսիսի անձամբ թղթակցիլ Ս. Քահանայապետի հետ, պարզելու Ս. Աթոռին առջեւ էջմիածնի Եկեղեցոյ պէտքերը:

Ծիրանաւորն Մելինոյ Ս. Ժողովի 13 Յունիս 1625 դումարուած Նիստին մէջ, կը հաղորդէ Ս. Ժողովոյն ի բանից Կարմեղեան Հ. Պրոսպերի a Spiritu Santo ի Սպահան հետեւեալը<sup>4</sup>.

« . . . ք. Նկատմամբ այն եկեղեցական զգեստներու, որոնք խնդրուած են Հայոց վարդապետ կոչուած Մովսէս եպիսկոպոսի համար, որ կաթողիկէ Եկեղեցոյ հետ բանիւ միայն միութիւն ըրած է. թող ինքն (Պրոսպեր) կամ Հարք (նոյն վանից) փորձեն, թէ կարելի չէ՞ արդեօք, որ նա (Մովսէս) նոյնը գրով ալ ընէ: Նորին Սրբութիւնը կը խոստանայ տալ զգեստներ, պայմանաւ որ անոնք յիշեալ եպիսկոպոսին իր (Քահանայապետին) անունով այն ստեն միայն շնորհուին, երբ հաւատոյ դաւանութիւնը գրաւոր ալ տուած է.

<sup>4</sup> Գործք Տ. Հ. Ս. Ժողովոյն. Հատոր 3 (Ամբ 1622—1625), թղ. 233—234: